ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 336 – Ա

17 մայիսի 2016 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի N 40 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգի» 9-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետի (64-3.1-18) թափուր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ), Կարեն Բարսեղյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Նելսոն Սարգսյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ), Սաշա Բավեյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Մանուշ Խունոյան (Գավառի N 1 հիմնական դպրոցի տնօրեն), Ռուզաննա Քոլոզյան (Գավառի N5 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն)՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Մ.Եղիազարյանին, քարտուղար՝ Կ.Բարսեղյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԵԿ ԴՐԻԳՈՐՅԱՆ